ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 103

24-10-2014 № 05/5-2/18189-14

Ձեր №

ՀՀ արտաքին գործերի
նախարարի տեղակալ
պարոն Շավարշ Քոչարյանին

Հարգելի պարոն Քոչարյան

Ի պատասխան ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ ս.թ. հոկտեմբերի 15-ի թիվ 1111/579560-14 գրության՝ Ձեզ ենք ներկայացնում «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրով Հայաստանի Հանրապետության վրա դրվող ֆինանսական պարտավորությունների և վավերացման նպատակահարմարության մասին տեղեկանքները:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ պայմանագիրը ՀՀ Ազգային Ժողովում և ՀՀ Սահմանադրական դատարանում ներկայացնելու համար որպես ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանի թեկնածությունը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝

Սուրեն Կարայան

Կատ.՝ Լարիսա Հարությունյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ.՝ 060 700 392
060 544 768

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ. (+374 60) 700 103

№ _____ _____

Ձեր № _____

ՀՀ արտաքին գործերի
նախարարի տեղակալ
պարոն Շավարշ Քոչարյանին

ՏԵՂԵԿԱՆՔ

«Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը և առավել խոր Եվրասիական ինտեգրացումը:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով (այսուհետ՝ ԵԱՏՄ) ստեղծվում է Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), որը հանդիսանում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի միջազգային կազմակերպություն և որի շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը, տնտեսության բնագավառում, մասնավորապես, առևտրի, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի ոլորտներում միասնական, համաձայնեցված կամ համակարգված քաղաքականության վարումը: ԵԱՏՄ հիմնական նպատակներն են անդամ-պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի միասնական շուկայի ձևավորումը և համաշխարհային

տնտեսության պայմաններում անդամ-պետությունների ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումն ու համակողմանի արդիականացումը:

ԵԱՏՄ-ին անդամակցության արդյունքում՝

Ներմուծման կամ արտահանման տուրքերի բացակայության պայմաններում կխթանվի և ավելի շահավետ կդառնա փոխադարձ առևտուրը, մասնավորապես հայաստանյան արտադրողները ավելի բարենպաստ պայմաններով կարտահանեն տեղական արտադրանքը ԵԱՏՄ անդամ պետություններ, որն իր հերթին կխթանի տեղական արտադրությունը, իսկ ԵԱՏՄ անդամ պետությունների՝ արտահանման մաքսատուրքով հարկվող արտադրանքի գինը, առանց այդ մաքսատուրքի ՀՀ ներմուծման դեպքում, զգալիորեն կկրճատվի: Ապրանքների ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է, որպեսզի այդ ապրանքները բավարարարեն մաքսային, տեխնիկական, սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական միասնական կարգավորման պահանջները (ինչը ենթադրում է օրենսդրական անհրաժեշտ բարեփոխումներ)՝

- միասնական մաքսային կարգավորման շրջանակներում կհստակեցվեն և կկատարելագործվեն մաքսային ձևակերպումները,. մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մեխանիզմները, կարդիականացվեն մաքսային հսկողության գործընթացը. մաքսային ծառայության տեղեկատվական համակարգը, կկատարելագործվի մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման համակարգը, կներդրվեն մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման միջոցները (բանկային երաշխիք, երաշխավորություն, գույքի գրավ և այլն):

ԱԱՀ-ի գանձումը որոշակիորեն կհետաձգվի, մասնավորապես, ըստ գործող կանոնների, այդ ապրանքների ԱԱՀ-ի վճարման պարտավորությունը կսահմանվի մինչև հաջորդ ամսվա 20-ը: 20-50 օրյա վճարման ժամկետի հետաձգման արդյունքում տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն կտրվի գտնվել առավել բարենպաստ կարգավիճակում.

- Միասնական տեխնիկական կարգավորման շրջանակների կիրառումը, սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների միասնական ռեգիստրի մաս հանդիսանալը կնպաստեն արտադրանքի ազատ տեղաշարժին ԵԱՏՄ անդամ-պետություններում՝ առանց լրացուցիչ համապատասխանության գնահատման

գործընթացների և Հայաստանի Հանրապետության տնտեսվարող սուբյեկտների համար մեծապես կդյուրացնի արտադրանքի շուկայահանման գործընթացը.

- սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական ոլորտներում անվտանգության ապահովման համակարգերի նույնականացումը հնարավորություն կտա մի կողմից օգտագործել ոլորտի գիտահետազոտական նվաճումները պետական մարմինների կողմից առավել արդյունավետ՝ նպատակ ունենալով առավելագույնս ապահովել սննդամթերքի անվտանգությունը, մյուս կողմից նույնական վերահսկողության գործիքների կիրառությունը տնտեսվարողների համար զգալի կիջեցնի փաստաթղթաշրջանառության ծավալները՝ այսպիսով կրճատելով ապրանքների տեղաշարժը խոչընդոտող սուբյեկտիվ ռիսկերը:

Սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսվարողները կարող են առանց լրացուցիչ սահմանափակումների կիրառման իրականացնել իրենց ապրանքների արտահանումը և իրացումը ԵԱՏՄ անդամ-պետություններ, ընդ որում այդ երկրներում իրացման համար այլևս անհրաժեշտություն չի լինի փոխել/լրացնել արտադրական ընթացակարգերն ու պիտակավորումը.

- լրացուցիչ ներդրումային հնարավորություններ կստեղծվեն՝ նպաստելով գործարար միջավայրի, երկրի ընթացիկ հաշվի բարելավմանը և ՀՆԱ-ի աճին, եկամուտների աճին:

- Հայաստանի տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն կունենան ոչ միայն էականորեն նվազեցնել գործընկեր երկրների հետ արտաքին առևտրում առկա գործառնական ծախքերը, այլ նաև լրացուցիչ արդյունքներ ապահովել առավել ազատականացված կապիտալի շարժի ռեժիմից:

- ինտեգրված արժութային շուկաների ձևավորումը նոր հնարավորություն կապահովի ֆինանսական շուկաների գործիքակազմի զարգացման և ազգային արժույթի շրջանառության ծավալների ու օգտագործման շրջանակների ընդլայնման, հեղինակության ու կայունության բարձրացման տեսանկյունից:

- ԵԱՏՄ տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար միասնական իրավական դաշտը հնարավորություն կընձեռի ԵԱՏՄ անդամ-պետությունների տնտեսվարող սուբյեկտներին պաշտպանել անդրսահմանային բնույթի ոչ բարեխիղճ գործողություններից.

- տնտեսվարող սուբյեկտների համար հնարավորություն կստեղծվի մուտք գործելու նոր շուկաներ առանց որևէ խտրականության՝ կրճատելով ֆինանսական ծախսերը և նվազեցնելով ժամանակի կորուստները, վարչական սահմանափակումները և խոչընդոտները.

- տեղական արտադրողին հնարավորություն կընձեռի մասնակցելու ԵԱՏՄ անդամ-պետություններում կազմակերպվող պետական գնումների գործընթացներին՝ վերջիններիս արտադրողների հետ հավասար իրավունքներով՝ խթան հանդիսանալով տեղական արտադրողների համար արտադրությունն ընդլայնելու, ինչպես նաև վերջիններիս կողմից արտադրվող ապրանքների, մատուցվող ծառայությունների որակի բարելավման համար.

- պաշտպանական միջոցների կիրառման պարագայում հնարավություն կստեղծվի տեղական արտադրողների պաշտպանության բարձրացման համար.

- լայն հնարավորություններ կբացվեն Հայաստանի և ԵԱՏՄ անդամ-պետությունների առջև արդյունաբերական ոլորտում ինտեգրացիայի համար, կտրուկ կաճեն նաև արդյունաբերական կոոպերացիայի զարգացման և ընդլայնման հնարավորությունները:

- կարճաժամկետ հատվածում երրորդ երկրների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի բարձրացումը կարող է բերել երրորդ երկրներից ներմուծման ծավալի ու առևտրային հաշվեկշռի վատթարացմանը, ինչպես նաև հավելյալ գնաճի, որն, այդուհանդերձ, կկրի միանգամյա բնույթ: Երկարաժամկետ հատվածում նշված ազդեցությունը կվերափոխվի ներմուծման փոխարինման արդյունաբերության զարգացման միջոցով, որը կարող է նպաստել արտահանման աճին՝ դրական ազդելով նաև երկրի ընթացիկ հաշվի վրա:

- աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների համար կսահմանվի ավելի բարենպաստ ռեժիմ, քան նախատեսված է ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների քաղաքացիների համար:

Անդամակցության արդյունքում հնարավոր բացասական հետևանքները մեղմելու կամ ռիսկերից խուսափելու համար Միանալու պայմանագրի 3-րդ հավելվածով սահմանվում են ԵԱՏՄ պայմանագրի և ՄՄ/ՄՏՏ ձևավորման շրջանակներում կնքված այլ միջազգային պայմանագրերի առանձին նորմերի կիրառման պայմանները, իսկ 4-րդ հավելվածով՝ այն ապրանքների ցանկը, որոնց հանդեպ Հայաստանի Հանրապետության կողմից անցումային

շրջանում կիրառվելու են ԵԱՏՄ Միասնական մաքսային սակագներից տարբերվող ներմուծման մաքսատուրքի դրույքաչափեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» պայմանագրի վավերացումը ՀՀ Ազգային Ժողովի կողմից գտնում ենք նպատակահարմար:

Հարգանքով՝

Սուրեն Կարայան

Կատ.՝ Լարիսա Հարությունյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ.՝ 060 700 392
060 544 768

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 103

_____ № _____

Ձեր № _____

ՀՀ արտաքին գործերի
նախարարի տեղակալ
պարոն Շավարշ Քոչարյանին

ՏԵՂԵԿԱՆՔ

«Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրով Հայաստանի Հանրապետության վրա դրվող ֆինանսական պարտավորությունների մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ ֆինանսական պարտավորությունները.

1. «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի մաս կազմող «Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մասին» պայմանագրի 20-րդ հոդվածով սահմանված է, որ Միության մարմինների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է Միության բյուջեի միջոցների հաշվին, որը ձևավորվում է «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» կանոնակարգով սահմանված կարգով: Հերթական ֆինանսական տարվա համար Միության բյուջեն ձևավորվում է ռուսական ռուբլով՝ անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների հաշվին: Միության բյուջե անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների չափը (սանդղակը) սահմանվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

Այսինքն՝ Եվրասիական տնտեսական միության միանալու համար վճարվող անդամավճարները Հայաստանի Հանրապետության համար առաջացնում են ֆինանսական պարտավորություններ:

2. Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 32-րդ հոդվածով սահմանված է, որ Միությունում իրականացվում է միասնական մաքսային կարգավորում՝ Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքին և Միության իրավունքը կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան, ինչպես նաև սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան:

Այսինքն՝ Եվրասիական միասնական մաքսային տարածքին ամբողջական ինտեգրումը Հայաստանի Հանրապետության համար կարող է առաջացնել լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ:

3. Արտաքին առևտրային քաղաքականության, մենաշնորհային քաղաքականության, մակրոտնտեսական և արժույթային քաղաքականությունների, ֆինանսական շուկաների կարգավորման, ծառայությունների առևտրի, հարկային քաղաքականության, մրցակցության, պետական գնումների, մտավոր սեփականության, արդյունաբերության և արդյունաբերական համալիրների և աշխատանքային միգրացիայի ոլորտում իրականացվող հետագա համահարթեցման միջոցառումները Հայաստանի Հանրապետության համար կարող են առաջացնել լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրին կից և անբաժանելի մասը կազմող թվով 29 արձանագրություններով ևս Հայաստանի Հանրապետությունը կարող է ստանձնել լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ:

Հարգանքով՝

Սուրեն Կարայան

Կատ.՝ Լարիսա Հարությունյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ.՝ 060 700 392
060 544 768

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382 էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

_____N _____

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Քոչարյան

Ի պատասխան Ձեր 2014թ. հոկտեմբերի 16-ի 1111/579589-14 գրության և ի կատարումն «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ուղարկում ենք նշված գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի դրույթների և ՀՀ օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի միջև հակասության առկայության կամ բացակայության, ՀՀ նոր օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ ընդունելու կամ գործող օրենքում կամ այլ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելու նորմերի առկայության կամ բացակայության մասին ՀՀ արդարադատության նախարարության տեղեկանքը:

Առդիր՝ տեղեկանքը՝ 13 էջից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱՆՔԸ

ՀՀ ԱԳՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի 1111/579589-14 ԳՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ, ՀՀ ՆՈՐ ՕՐԵՆՔ ԿԱՄ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՄ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՈՐՄԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» Պայմանագրի հավելված 1-ում նշված միջազգային պայմանագրերը պահանջում են կից ցանկում նշված օրենքների և այլ իրավական ակտերի ընդունում կամ համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ Արսեն Մկրտչյան

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության» մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու հետ կապված Հայաստանի Հանրապետության այն իրավական ակտերի, որոնցում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև նոր իրավական ակտերի նախագծերի

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
	Հայաստանի Հանրապետության օրենքներ	
1.	«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-193 30.05.2001թ.)	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
2.	«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-176-Ն 06.12.2004թ.)	ՀՀ մշակույթի նախարարություն
3.	ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280-Ն 28.11.2011թ.)	ՀՀ էներգետիկայի նախարարություն
4.	«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-518-Ն 26.12.2002թ.)	ՀՀ առողջապահության նախարարություն
5.	ՀՀ քրեական օրենսգիրք Հավելված 2.3 (ՀՕ-528-Ն 18.04.2003թ.)	ՀՀ առողջապահության նախարարություն
6.	«Դեղերի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-259 27.10.1998թ.)	ՀՀ առողջապահության նախարարություն
7.	«Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-324 16.04.2002թ.)	ՀՀ առողջապահության նախարարություն
8.	«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» (ՀՕ-275-Ն 15.11.2011թ.)	ՀՀ առողջապահության նախարարություն
9.	«Ձենքի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-246 03.07.1998թ.)	ՀՀ ոստիկանություն
10.	«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-19-Ն 08.02.2012թ.)	
11.	«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22-Ն 08.02.2012թ.)	
12.	«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-20-Ն 08.02.2012թ.)	

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
13.	«Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ 135-Ն 10.06.2008թ.)	
14.	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-112 06.11.2000թ.)	
15.	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-221 05.05.1998թ.)	
16.	ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (ՀՕ-139-Ն 05.12.2013թ.)	
17.	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-18-Ն 25.12.2003թ.)	
18.	«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-148 07.03.2001թ.)	
19.	«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-293-Ն 28.11.2007թ.)	
20.	ՀՀ ջրային օրենսգիրք (ՀՕ-373-Ն 04.06.2002թ.)	
21.	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ՀՕ-239 05.05.1998թ.)	
22.	«Գնումների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-206-Ն 22.12.2010թ.)	
	Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներ	
23.	«Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 17-ի թիվ 293-Ն որոշում	ՀՀ բնապահպանության նախարարություն
24.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 8-ի N 97 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության արգելված վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 8-ի թիվ 1093-Ն որոշում	ՀՀ բնապահպանության նախարարություն

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
25.	«Օզոնային շերտը քայքայող նյութերի ցանկը հաստատելու և ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 327-Ն որոշում	ՀՀ բնապահպանության նախարարություն
26.	«Օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակները սահմանելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 17-ի թիվ 591-Ն որոշում	ՀՀ բնապահպանության նախարարություն
27.	«Հայաստանի Հանրապետության վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 874-Ն որոշում	ՀՀ բնապահպանության նախարարություն
28.	«Օզոնային շերտը քայքայող նյութերի առաքման՝ ներմուծման կամ արտահանման, կամ տարանցիկ փոխադրման թույլտվության ձևն ու տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի թիվ 771-Ն որոշում	ՀՀ բնապահպանության նախարարություն
29.	«Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ըստ մաքսային ռեժիմների առանձին ապրանքների տեղափոխումն արգելելու մասին» ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 902 որոշում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
30.	«Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեվտրի իրականացման լիցենզավորման կարգերը և այդ գործունեությունների իրականացման լիցենզիաների ձևերը հաստատելու մասին»ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 18-ի թիվ 281-Ն որոշում	ՀՀ առողջապահության նախարարություն

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
31.	«Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1129-Ն որոշում	ՀՀ առողջապահության նախարարություն
32.	ՀՀ կառավարության 20.09.2000թ. «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» N581 որոշում	ՀՀ առողջապահության նախարարություն
33.	«Փոխպատվաստման նպատակով դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների ներմուծման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի թիվ 551-Ն որոշում	ՀՀ առողջապահության նախարարություն
34.	«Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշում	ՀՀ ոստիկանություն
35.	«Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 1308-Ն որոշում	ՀՀ ոստիկանություն
36.	«Մաքսատուրքի վճարումից ազատվող՝ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական հիմնադրամի համալրմանն ուղղված ապրանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001	

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
	թվականի օգոստոսի 9-ի թիվ 720-Ն որոշում	
37.	«Մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափով հաշվարկման շաքարի արտադրության համար 1701 11 ծածկագրին դասվող (եղեգնից շաքար-հումք առանց բուրահաղորդող ու ներկող հավելումների) ապրանքների ՀՀ ներմուծման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի թիվ 546-Ն որոշում	
38.	«Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 954-Ն որոշում	
39.	«Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1560-Ն որոշում	
40.	«Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1925-Ն որոշում	
41.	«Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշում	
42.	«Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1913-Ն որոշում	
43.	«Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1438-Ն որոշում	

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
44.	«Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի թիվ 491-Ն որոշում	
45.	«Գարեջրի և դրա արտադրության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի թիվ 44-Ն որոշում	
	Նախագծեր	
46.	«Հայաստանի Հանրապետությունում սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների և պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն
47.	«Կենսաբանական ակտիվ հավելումների ցանկը, թույլատրելի մակարդակները, դրանց արտադրության մեջ օգտագործվող վիտամինների ձևերը և արգելված բույսերի ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
48.	«Ապրանքի սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին համապատասխանությունը հավաստող անվտանգության միասնական փաստաթղթի տրման կարգը, ապրանքի սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին համապատասխանությունը հավաստող անվտանգության միասնական փաստաթղթի՝ ապրանքի պետական գրանցման վկայականի ձևը, ապրանքների պետական գրանցման վկայականների ռեեստրի վարման կարգ հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
	որոշման նախագիծ	
49.	«Սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջները, սննդամթերքի անվտանգության և սննդային արժեքի պահանջները, միասնական սանիտարական պահանջներով սահմանված ապրանքների ցանկը, պահածոյացված սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները, ձկան, խեցգետնակերպերի, փաթկամորթերի, երկկենցաղների, սողունների և դրանց վերամշակման մթերքների անվտանգության մակաբուծական ցուցանիշներ հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն
50.	«Սննդամթերքի անվտանգության ոլորտում տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն
51.	«Տարայավորված խմելու ջրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
52.	«Պարենային հումքի արտադրության ժամանակ կենդանական ծագման սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների առավելագույն մնացորդային մակարդակները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
53.	«Սննդամթերքում Ցեզիում-137 և ստրոնցիում-90 ռադիոնուկլիդների	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
	թույլատրելի մակարդակները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	անվտանգության պետական ծառայություն
54.	«Հանքային ջրերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
55.	«Սննդամթերքի և սննդային միջավայրերի հետ շփման համար նախատեսված պոլիմերային հիմքով պատրաստված նյութերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
56.	«Սննդային հավելումների և բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
57.	«Սանիտարական, անասնաբուժական, բուսասանիտարական միջոցառումների համարժեքության ճանաչման և ռիսկի գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
58.	«Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա և ոչ ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
59.	«Անասնաբուժական վերահսկողության ենթակա օբյեկտների համատեղ ստուգումների, ապրանքների նմուշառման իրականացման, Մաքսային միության ձեռնարկությունների և երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրների վարման միասնական կարգերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
	կառավարության որոշման նախագիծ	
60.	«Մաքսային միության անդամ մի պետությունից Մաքսային միության անդամ մյուս պետություն փոխադրվող, Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող անասնաբուժական վերահսկման (հսկողության) ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրների օրինակելի ձևերը, դրանց ձևավորման և վարման կարգը, հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրների ձևերի տվյալների փոխանցման կանոնակարգի և ձևաչափի վերաբերյալ տեխնիկական պայմանները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
61.	«Մաքսային միության տարածքում և սահմանը հատող անձանց առողջական վիճակի, փոխադրամիջոցների, ապրանքների նկատմամբ և հիվանդ կամ կասկածելի անձանց հայտնաբերման ժամանակ հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման և իրականացման կարգը, բժշկասանիտարական հսկիչ կետերի կառուցվածքին և հագեցվածությանը ներկայացվող տիպային պահանջները, վարակիչ հիվանդությունների ցանկը և հաշվարկային, հաշվետվական, ծանուցման ձևերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ առողջապահության նախարարություն
62.	«Մաքսային միության անդամ չհանդիսացող երկրներից ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից դեպի Մաքսային միության անդամ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
	չհանդիսացող երկրներ արտահանվող բուսասանիտարական կարանտին հսկողության ենթակա բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ընթացակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ծառայություն
63.	«Մաքսային միության անդամ այլ երկրներից ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից դեպի Մաքսային միության անդամ այլ երկրներ արտահանվող բուսասանիտարական կարանտին հսկողության ենթակա բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ընթացակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
64.	«Հայաստանի Հանրապետության սահմանին և Հայաստանի Հանրապետության տարածքում անասնաբուժական վերահսկողության իրականացման միասնական կարգը, անասնաբուժական վերահսկողության իրականացման ժամանակ ընդունվող ակտերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
65.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
66.	«Հայաստանի Հանրապետությունից Մաքսային Միության այլ երկրներ Մաքսային Միության մտավոր	

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
	սեփականության օբյեկտների միասնական մաքսային և Մաքսային Միության անդամ այլ երկրների ազգային մաքսային ռեեստրներում գրանցված մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքների առաքման սահմանափակումների հսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	
	Գերատեսչական ակտեր	
67.	«Կենդանիներ, կենդանական ծագման մթերք, կենդանական ծագման հումք, կերեր և կենդանական ծագման լրացակերեր Հայաստանի Հանրապետություն ներմուծելու դեպքում ներկայացվող անասնաբուժական-սանիտարական, անասնաբուժական պահանջները հաստատելու մասին» ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012 թվականի հունիսի 6-ի թիվ 84-Ն հրաման	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
68.	«Ներքին գործերի մարմինների կողմից քաղաքացիական և ծառայողական զենքի և փամփուշտների շարժը վերահսկելու մասին» ՀՀ ներքին գործերի նախարարի 2002 թվականի մարտի 15-ի հրաման	ՀՀ ոստիկանություն
	Նախագծեր	
69.	ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվող «Կենցաղային քիմիային և ներկանյութերին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոններ և նորմեր	ՀՀ առողջապահության նախարարություն
70.	ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվող «Մեքենաշինական արտադրանքին, սարքերի շինությանը և էլեկտրոտեխնիկային ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոններ և նորմեր	ՀՀ առողջապահության նախարարություն

NN	ՀՀ իրավական ակտի անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմինը
71.	ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվող «Իոնացնող ճառագայթով մշակված ապրանքներին, արտադրանքին, այդ թվում գեներացնող, ինչպես նաև ռադիոակտիվ նյութեր պարունակող ապրանքին և արտադրանքին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոններ և նորմեր	ՀՀ առողջապահության նախարարություն
72.	ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվող «Քիմիական և նավթամթերային արտադրանքին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոններ և նորմեր	ՀՀ առողջապահության նախարարություն
73.	«Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային գրանցամատյանի մասին» (Սանկտ Պետերբուրգ, 2014 թվականի մայիսի 21) Համաձայնագրով նախատեսված գործառույթների իրականացման համար ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման	